# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ն ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2023/ՀԴՁ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 2 | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | կոստյումներ | Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ | Բաճկոնը մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/, 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ2 314գ, աստառը՝ մուգ փիրուզագույն <<POLICE>> գրառումով և ՀՀ Ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը 70 գ/մ2: Բաղկացած է կոճկվող լանջափեշերից, մեջքից, օձիքից և թևքերից: Կոճկվում է առաջամասի կենտրոնում տեղադրված պլաստմասե շղթայով, մեկ առանձին կտորից գոտեմասով, գոտու կողքային մասերը ունի 12-18 սմ երկարությամբ առաձգական |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | ժապավեն: Բաճկոնի թևքերը բաղկացած են 2 կտորից, թեզանիքը թևքին միացված է կարմիր եզրաքուղով, թեզանիքը կոճկվում է 2 մետաղյա արծաթագույն ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, 14մմ ալյումինե համաձուլվածքից կոճակներով: Բաճկոնի առաջամասերի ներքևում մշակվում է թեք ներկարված շղթայով փակվող գրպաններ: Կրծքամասում հորիզոնական՝ շղթայով փակվող ներկարված գրպաններ, կարմիր եզրաքուղերով: Ձախ գրպանի վերևի մասում կարմիր եզրաքուղից 70 մմ բարձրության վրա կարված է կտորից օղակ կրծքանշանի համար, 20 մմ երկարությամբ, 10 մմ լայնությամբ: Բաճկոնի հետևամասը բաղկացած է 2 կտորից, որոնք միացված են կարմիր եզրաքուղով: Բաճկոնի օձիքը հետ ծալվող, մշակվում է 1 կտորից: Ձախ թևքի ուսամասից 60 մմ ներքև կարվում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության թևքանշան՝ բաղկացած է 2 մասից, գունավոր գործվածքե կտորից, կողային |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | մասերը մշակված կարմիր գույնի թելերով, փակ եզրակարող մեքենայով: Ուսադիրները կարվում են սև կտորից, բաճկոնի չափսի համապատասխան երկարությամբ և 45 մմ լայնությամբ: Տաբատը – Մուգ փիրուզագույն կտորից /արտ. 2311/ 67% բուրդ, 33% պոլիէսթեր, քաշը 1 մ2 314 գր.: Աստառը մուգ փիրուզագույն <<POLICE>> գրառումով և ՀՀ ոստիկանության զինանշանի պատկերով, քաշը 70գր մ2: Ուղիղ ուրվագծով, կողագծերը 1.5-2 մմ լայնությամբ կարմիր գույնի կտորից եզրաքուղով: Գոտին՝ կամրջակներով, գոտեփոկի անցկացման համար կամրջակներից մեկը պետք է գտնվի գոտկատեղի հետնամասի միացման կարի վրա: Կոճկվում է կոճակով, մետաղյա կեռիկով և շղթայով: Կողային գրպանները թեք են, տեղադրված եզրաքուղից առաջ: Հետևամասի աջ կողմում կոճակով կոճկվող կափույրով ներկարված գրպան: Առաջամասում մինչև ծնկները մշակվում է աստառ: Բաճկոնի վրա պետք է կախած լինի պիտակ, պիտակի վրա պետք է նշված լինի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | տեսականու անվանումը, չափսը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը և ներսի կողմից կարվում է արտադրանքի չափս-հասակի ստուգիչ պիտակ: Փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ մեծ պարկով, որի մեջ տեսականին 5 հատ՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, մեկ պարկի մեջ՝ 1 հատ: Պարկերի չափսերը պետք է համապատասխանեն կոստյումի չափսերին, որպեսզի կոստյումը չճմրթվի: Պարկերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, չափսերը, արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման ամիսն ու տարեթիվը: Անհրաժեշտության դեպքում պատվիրատուի պահանջով տրամադրվում է լաբորատոր ստուգման եզրակացությունը: Չափսերը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Канакери кари фабрика в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ Ո ԷԱՃԱՊՁԲ-2023/ՀԴՁ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 2 | | | | | |